



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵԴԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի,  
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ  
հեռ. (+374) 25324114, 91199324  
Էլ. փոստ [info\\_alaverdi@aarhus.am](mailto:info_alaverdi@aarhus.am)  
[anushevoyan@rambler.ru](mailto:anushevoyan@rambler.ru)

Lori, Alaverdi,  
Zoravar Andranik str 8/1, 403  
Tel. (+374) 25324114, 91199324.  
E-mail [info\\_alaverdi@aarhus.am](mailto:info_alaverdi@aarhus.am)  
[anushevoyan@rambler.ru](mailto:anushevoyan@rambler.ru)

«Վալլեքս» իմբի ընկերությունների փոխնախագահ,  
«ԷՅ-ՄԻ-ՓԻ» ՓԲԸ տնօրեն  
Պարոն Գ. Արզումանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արզումանյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 22 հոկտեմբերի 2010թ.-ի N 154 արտանետման թույլտվության պատճեն
2. 12 դեկտեմբերի 2011թ.-ի N 183 արտանետման թույլտվության պատճեն
3. Ներկայումս գործող "Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու ժամանակավոր չափաքանակներ"-ը փաստաթղթի պատճեն
4. նույն անվան տակ նախկինում (2005թ-ից 2010թթ) տրված ժամանակավոր չափաքանակների փաստաթղթի պատճեն
5. Խողովակի տեղափոխման նախագիծն ու այդ նախագծի հիման վրա տրված բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության պատճեն (որի մեջ նշված է SO2-ի տարեկան 6000 տոննա արտանետման նորմը)
6. Սահմանային թույլատրելի արտանետումների հաստատած ու ներկայումս գործող նախագիծն ու արտանետման թույլտվության այն օրինակը, որում որպես SO2 -ի արտանետման նորմ ու թույլտվություն նշված է տարեկան 6000 տոննա:  
/ խնդրում եմ նաև էլեկտրոնային տարբերակով/

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Ալավերդու Օրհուս կենտրոնի իրավապահող

Անուշ Էվոյան

25.09.2014թ.